Կին և քաղաքականությունը

Ամենամսյա անվճար հավելված

Հոկտեմբեր, 2008

Կանանց 23 ՀԿ-ներ դիմել են ԱԺ՝ կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածությունը մինչև 30% բարձրացնելու առաջարկությամբ

Էջ 3

## Փաստաշար

### Ամենաազդեցիկներն ու հմայիչները

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը երրորդ անգամ անընդմեջ զբաղեցրեց առաջին տեղը աշխարհի առավել ազդեցիկ կանանց վարկանիշային աղյուսակում, որն ամեն տարի կազմում է ամերիկյան Forbes հեղինակավոր հրատարակությունը: Վերջերս հրապարակված ցուցակում Անգելա Մերկելին հետևում է ամերիկացի ֆինանսիստ, Դեպոզիտների ապահովագրության գծով դաշնային կորպորացիայի (FDIC) ղեկավար Շեյլա Բեյրը, որը, փորձագետների կարծիքով, «ապահովում է կայունություն և հասարակական վստահություն ազգային ֆինանսական համակարգում» և որն այժմ ստիպված է «ուղղորդել» հիփոթեքային ճգնաժամը: Երրորդ տեղում է ամերիկյան հսկա ընկերության՝ PepsiCo-ի գործադիր տնօրեն Ինդրա Նույին:

### Ռուանդան նորից ռեկորդ սահմանեց

Սեպտեմբերին անցկացված խորհրդարանական ընտրություններում Ռուանդան դարձավ առաջին երկիրը, որտեղ կանայք ստացան խորհրդարանում տեղերի մեծ մասը (55%): Ինչպես հայտնի է, աշխարհի խորհրդարաններում կանանց ներկայացվածության միջին ցուցանիշը 18,4 % է: Դա նկատի ունենալով՝ գրեթե 110 երկրներում ներմուծվեցին կանոններ ու քվոտաներ, որոնք օգնում են կանանց ընտրվելու օրենսդիր մարմիններում: Սակայն այս հարցում ամենամեծ հաջողության հասել է Ռուանդան: Տեղերի 30%-ը բաժին է ընկել կանանց երաշխավորված քվոտաների շնորհիվ, մյուս 25%-ը նրանք ստացել են իրենց ուժերով: Համեմատության համար՝ այնպիսի երկրներում, ինչպիսին են Շվեդիան, Կուբան, Ֆինլանդիան և Արգենտինան, կանանց է պատկանում պատգամավորական մանդատների մոտավորապես 48-ից 40%-ը: Գերմանիայի խորհրդարանում պատգամավորների շուրջ 32%-ը կանայք են, Ռուսաստանում՝ 15%-ը, Հայաստանում՝ 8,3 %-ը:

### Նրա անունը թարգմանվում է «թռչնակ»

Իսրայելի արտաքին գերատեսչության ղեկավար Ցիպի Լիվնին հաղթանակ տարավ «Քադիմա» իշխող կուսակցության նախագահի ընտրություններում՝ իրական հնարավորություն ստանալով դառնալու երկրի պատմության մեջ երկրորդ վարչապետը՝ Գոլդա Մեիրի ժամանակներից, ով ղեկավարել է կառավարությունը 1969-1974 թթ.: Սեպտեմբերի 17-ին տեղի ունեցած կուսակցական ընտրություններում նախկին իրավաբան և «Մոսսադ» հետախուզության պաշտոնաթող գործակալ Լիվնին ստացավ կուսակիցների 43,1% աջակցությունը՝ 2%-ով առաջ անցնելով (431 ձայն) իր հիմնական մրցակցից՝ տրանսպորտի նախարար Շաուլ Մոֆազից, որը նախկինում ղեկավարում էր Իսրայելի գլխավոր շտաբը և պաշտպանության նախարարությունը: Սպասվում է, որ Էհուդ Օլմերթի պաշտոնանկությունից հետո, որի ժամկետների մասին դեռ ոչինչ հայտնի չէ, Լիվնին երկրի նախագահ Շիմոն Պերեսից կստանա կառավարություն ձևավորելու մանդատ: Շատերը կարծում են, որ այդպես էլ կլինի: Նախ՝ Լիվնին առայժմ անբասիր վարկանիշ ունի: Երկրորդ՝ արտաքին գործերի նախարարի պաշտոնում պատկառելի քաղաքական փորձ, ու երրորդ՝ նա ծառայել է իսրայելական «Մոսսադ» հետախուզությունում: Սակայն չնայած ռազմական անցյալին՝ Լիվնիին համարում են ոչ թե Շարոնի «ճուռակը», այլ Օլմերթի «աղավնին», իսկ «Ցիպի» անունը եբրայերենից թարգմանվում է որպես «թռչնակ»:

Լուսանկարը՝ Մարգարիտ Եսայանի

# ՏԻՄ, թե՞ «Տղամարդկային Ինքնակառավարման» Մարմիններ

*Հանրապետության 48 քաղաքապետների թվում ոչ մի կին չկա:*
*Քաղաքային համայնքների ղեկավարների (թաղապետների) շարքում նրանք նույնպես չկան:*
*Գյուղական համայնքների ղեկավար (գյուղապետ) է կանանց 2,5%-ը:*
*Քաղաքային և գյուղական ավագանիների կազմում կանայք 8% են:*

**Սրանք 2005 թ. ընտրությունների արդյունքներով ՏԻՄ-երում կանանց մասնակցության տվյալներն են, և վերջին տասը տարվա դինամիկան հաշվի առնելով հազիվ թե հնարավոր լինի սպասել այլ արդյունքներ 2008-ի ընտրարշավից: Թեպետ սպասվում է, որ մի յոթը տարուց ամեն ինչ պետք է հրաշալի ձևով փոխվի: Ինչո՞ւ հատկապես յոթ: Բանն այն է, որ Հազարամյակի զարգացման նպատակների շրջանակում մեր երկիրն իր առջև է դրել մի նշածող, որ 2015-ին տեղական համայնքների ղեկավարությունում 10%-ից պակաս կին չլինի: Համեստ պարտավորություն է, սակայն նման գրոհի համար նախադրյալներ այս պահին չկան: Հավանաբար, որոշել են, որ կանանց համար խոստացված «պայծառ ապագան» հեռու է և առայժմ կարելի է թուլանալ:**

Սեպտեմբերը մայրաքաղաքում անցավ ՏԻՄ ընտրությունների նշանի ներքո, իսկ հոկտեմբերի սկզբից տեղական նշանակության մարտերը տեղափոխվեցին մարզեր: Կանայք, ինչպես միշտ, սահմանափակվեցին առավել քան համեստ մասնակցությամբ: Հանրապետության մասշտաբով ընդհանուր արդյունքները ամփոփել հնարավոր կլինի միայն հոկտեմբերի վերջին: Իսկ Երևանում պատկերն արդեն պարզ է, ու այստեղ կանանց ու տղամարդկանց հավակնությունների իմաստով ոչինչ չի փոխվել:

Մայրաքաղաքի նվազագույնը վեց համայնքների ավագանիները հերթական անգամ արժանացան «տղամարդկանց ակումբի» պատվավոր կոչման: Մյուս վեցում կանայք ընդգրկվել են, սակայն հաջողությունը ժպտաց նրանցից ընդամենը 8-ին: Ի դեպ, 8 թիվը արդեն տասը տարի է, ինչ առաստաղի դեր է խաղում իգական սեռի համար: Ընդ որում, եթե 2005 թ. մայրաքաղաքի ավագանու համար առաջադրվել էր 39 կին, որոնցից անցավ ութը, ապա այս անգամ թեկնածուների թիվը նվազեց մինչև 22: Այսպիսով Երևանի համայնքներն աղետալիորեն կորցնում են իրենց գրավչությունը կանանց աչքում, ու մայրաքաղաքը դրանից միայն տուժում է. այն աղբոտված ու աղտոտված է, այնտեղ չկա հարմարավետություն և հաճելի մթնոլորտ, չկա մաքրություն, կարգ ու կանոն: Չկա կնոջ ձեռք և կնոջ հոգատարություն:

Ինչ վերաբերում է մայրաքաղաքի թաղապետների պաշտոնին, ապա երբեմն տպավորություն է ստեղծվում, թե տղամարդիկ ավելի շուտ կնոջը կզիջեն նախագահի պաշտոնը, քան թույլ կտան ղեկավարել համայնքը: Մինչև այժմ թաղապետի պաշտոնին ձգտել են հասնել միայն երկու կին: Ռուզան Խաչատրյանը (ՀԺԿ) առաջադրվել էր նախորդ ընտրություններում Կենտրոն համայնքում, իսկ Զոյա Թադևոսյանը («Ժառանգություն») այս տարի՝ Արաբկիրի թաղապետի պաշտոնի համար: Երկուսը փորձեցին քարոզարշավի ընթացքում խաղարկել երկու գործոն՝ կանանց և ընդդիմադիր: Որի հետևանքով բախվեցին կրկնակի հակազդեցության, քանի որ քաղաքականության մեջ երկու մինուսը ոչ միշտ է հանգեցնում պլյուսի: Այնուամենայնիվ, չէինք ցանկանա նրանց փորձը անհաջող համարել: Թեկուզ այն իմաստով, որ նրանք կոտրեցին ինչ-ինչ խոչընդոտներ այն կանանց համար, ովքեր կգան վաղը, կկարողանան նրանց փորձից դասեր քաղել և կլինեն ավելի լավ ու հաջողակ: Իսկ մայրաքաղաքի թաղապետներին չէր խանգարի արդեն հիմա ի կատար ածել Զոյա Թադևոսյանի որոշ նախընտրական խոստումները: Խոսքը լվացքի փոշիով փողոցները մաքրելու մասին է, գաղափար, որ, չգիտես ինչու, ծաղր ու ծանակի առարկա դարձավ: Ափսոս: Ավելի լավ է լվացքի փոշիով մաքրել, քան պարզապես փողոցի աղբը լղոզել ջրցան մեքենայով...

Համարվում է, որ մայրաքաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայիս ընտրությունները քաղաքապետի ընտրությունների յուրօրինակ փորձ էին, որոնք կանցկացվեն «Երևանի մասին» օրենքը խորհրդարանի կողմից ընդունվելուց հետո: Օրենքի ընդունման, ասել կուզի՝ նաև ընտրությունների ստույգ ժամանակը դեռ հայտնի չէ:

Օրինագիծն այժմ անցել է առաջին ընթերցումը, և ենթադրվում է, որ քաղաքապետին պետք է ընտրի 65 անդամից կազմված Երևանի ավագանիների խորհուրդը: ԱԺ-ում օրինագծի քննարկման ընթացքում «Ժառանգության» կողմից առաջարկություն հնչեց քվոտաներ սահմանել, որոնք կերաշխավորեն այդ խորհրդում կանանց ներկայացվածությունը: Մայրաքաղաքի ընտրությունների արդյունքները մի ավելորդ անգամ ապացուցում են, որ այլ ելք չկա: Եթե, իհարկե, չենք ցանկանում հիմնել հերթական «տղամարդկանց ակումբ»:

## Անոնս

**«Կինը և քաղաքականությունը» ներդիրի խմբագրակազմը կազմակերպում է Երևանում հերթական բանավեճ ընթերցողների մասնակցությամբ «Քվոտաները. կողմ և դեմ» թեմայով: Հրավիրում ենք ձեզ հոկտեմբերի 28-ին ժամը 13-ին «Անի պլազա» հյուրանոցի փոքր սրահ:**

## Դեմոս

### Ո՞ր պաշտոնում չէիք ցանկանա կին տեսնել

2008 թ. ապրիլ-մայիս ամիսներին Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի անցկացրած հարցման մասնակիցների շուրջ 80%-ը համաձայնում է. մեզանում կանայք շատ քիչ են որոշումների ընդունման մակարդակում:

Այնուամենայնիվ, նրանք պատրաստ չեն կնոջը տեսնել բոլոր ղեկավար պաշտոններում.

54,4%-ը չէր ցանկանում կնոջը տեսնել նախագահի պաշտոնում:

41,8%-ը դեմ է կնոջը վարչապետի պաշտոնում:

31,7%-ը չի տեսնում գեղեցիկ սեռին գյուղապետի դերում:

28,7%-ը դեմ է կնոջը մարզպետի պաշտոնում:

29,2%-ը չի ցանկանում կին քաղաքապետ:

22,5%-ը դեմ է կին նախարարին:

21%-ը դեմ է կին քաղաքապետին:

11,7%-ը չի վստահում կին պատգամավորներին:

Եվ այսպես, ժողովրդի համար ավելի հաճելի է կնոջը տեսնել նախարարի պաշտոնում, քան գյուղապետի դերում: Մինչդեռ իրականում ամեն ինչ ճիշտ հակառակն է: Մեզանում կին գյուղապետները 20-ն են, իսկ նախարար՝ ընդամենը երկուսը: Մյուս կետերով կարելի է չանհանգստանալ, պետության թիվ մեկ պաշտոնում նրանք երբեք չեն էլ առաջադրվել, մյուս պաշտոններում, ինչպես, օրինակ՝ վարչապետի, քաղաքապետի կամ քաղապետի, կին չի եղել և չկա, երրորդում՝ նրանք մեկ-երկուսն են և վերջ: Մարզպետի դերում մեկ կինը ընդհանուր պատկերը չի փոխում և անբարյացակամներին չի զայրացնում: Հուսադրող է, որ հասարակական կարծիքում կանանց համար կանաչ ճանապարհ է բացվում դեպի խորհրդարան. չէ՞ որ հարցվածների գրեթե 90%-ը ոչինչ չունի կին պատգամավորների դեմ: Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչո՞ւ նրանց հասավ ընդամենը 12 մանդատ:

***

**Ինչպե՞ս եք վերաբերվում կանանց համար քվոտաներին**

Այս հարցին պատասխանելիս հարցվածների կարծիքները բաժանվեցին հետևյալ կերպ.

**Դրական՝ 43%**

**Բացասական՝ 13,5%**

**Չգիտեմ՝ 43,5 %**

Քվոտաներին դրական վերաբերվողների գերակշիռ մասը (75,3%) համարում է, որ նրանց առավել օպտիմալ չափը 20-50%-ի սահմաններում է:

Հարցվածների 53,4%-ը կանանց համար տեղերի քվոտավորման անհրաժեշտություն է տեսնում նաև գործադիր մարմնում:

*Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բոլոր մարզերում՝ 1300 հարցվածների շրջանում:*

## Հաջողության բանաձեւը

### Հասմիկ Բաղդասարյան.

# «Եթե գործ ունես մարդկանց հետ, չպիտի անջատես նրանց հոգսը քոնից»

**Սեպտեմբերին մայրաքաղաքի Շենգավիթ համայնքի բնակիչները երրորդ անգամ անընդմեջ Հասմիկ Բաղդասարյանին ընտրեցին ավագանու անդամ: Մեր ծանոթության առաջին իսկ րոպեներին զգացի, որ նրա հետ զարմանալիորեն հեշտ և հաճելի է շփվելը: Իսկ հետևելով նրան աշխատելիս մեկ այլ եզրակացության էլ հանգեցի. նա հավանաբար նույնքան նախաձեռնող է եղել մանկուց՝ և՛ դպրոցում, և՛ բուհում, ամեն տեղ... Պատկերացրեք՝ կռահեցի: Նրա անսպառ եռանդը՝ ակնհայտ կազմակերպչական ձիրքը, հավելած կանացի հմայքը, անհնար է չնկատել:**

Պատմում է, թե քաղաքականության նկատմամբ հետաքրքրությունը նրա մեջ արթնացել է 88-ին՝ ազգային զարթոնքի օրերին: Անսովոր, վարակիչ ոգևորություն կար շուրջս, համախմբում էի գործընկերներիս ու մտերիմներիս՝ առաջնորդելով հանրահավաքների և ցույցերի: Իսկ իր լուրջ քաղաքական գործունեության մեկնարկը կապում է «Օրինաց երկիր» կուսակցության հետ, որին անդամագրվեց 1998 թ.: Այսօր Հասմիկ Բաղդասարյանը կուսակցության վարչության անդամ է:

*«Սկզբնական շրջանում դժվարությունները շատ էին, որովհետև ամուսինս դեմ էր իմ քաղաքական գործունեությանը,-* պատմում է նա: *- Սակայն որոշ ժամանակ անց ամեն ինչ հարթվեց, և ընտանիքս, երեխաներս դարձան ոչ միայն գլխավոր հենարանը, այլև խթանել քաղաքական ասպարեզում առաջ գնալու համար: Ինձ համար շրջադարձային էին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի բարձրագույն քաղաքական դասընթացները: Գիտելիքներն ինձ վստահություն հաղորդեցին, սակայն գլխավորը՝ ես սկսեցի այլ կերպ ընկալել քաղաքական կյանքում կնոջ տեղն ու դերը, գիտակցեցի նրա առանձնահատուկ առաքելությունը: Այս ամենն ինձ օգնեց հետագայում ճիշտ կազմակերպելու իմ նախընտրական քարոզարշավը, երբ ստիպված էի պայքարել ընտրողների ձայների համար ավանդական համայնքում և տղամարդ մրցակիցների հետ»:*

Առաջին անգամ Շենգավիթի բնակիչները նրան ընտրեցին 2002-ին, հետո նա նորից առաջադրվեց 2005-ին, և ամեն անգամ ավագանու անդամ էր դառնում՝ մրցակիցներից ավելի ու ավելի առաջ անցնելով:

«Երբ կինը նպատակաուղղված գնում է առաջ՝ հաղթանակն անխուսափելի է: Առաջին ընտրությունից հետո օրագրում գրեցի, թե քաղեցի 20 տարվա ցանած բերքի արդյունքը: Այս տարիների ընթացքում ես հասկացա գլխավորը. եթե ժողովրդի հետ ես աշխատում, նրանց հոգսը չպետք է անջատես քոնից: Ու մի բան էլ. երբ ժողովուրդը քեզ գնահատում, վստահում ու հավատում է, չպետք է նրան հիասթափեցնես: Սա է իմ նշանաբանը»:

Նրա կյանքում ոչ միայն հաղթանակներ, պարտություններ էլ են եղել: Ասում է, թե պարտությունն էլ փորձ է, որ պետք է ունենաս: 2007-ին, երբ որոշեց մեծամասնական ընտրակարգով պատգամավոր առաջադրվել, գրեթե հաստատ գիտեր, որ կպարտվի, սակայն որոշեց պայքարել մինչև վերջ: Արդյունքում՝ այդ ընտրատարածքում առաջադրված վեց թեկնածուների շարքում զբաղեցրեց երկրորդ տեղը՝ ստանալով 5000 ձայն: «Մաքուր» ձայներ էին, ընդգծում է նա, առանց ընտրակաշառք բաժանելու:

Աշխատասենյակի պատերին բազմաթիվ պատվոգրեր նկատելով՝ հարցնում եմ պարգևների մասին: Ի պատասխան առանձնացնում է միայն մեկը, որը հատկապես թանկ է՝ նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ստորագրությամբ: «Այդ պատվոգիրն ինձ համար ամենաթանկ նվերն ու իմ աշխատանքի ամենաբարձր գնահատականն է: Համաձայնեք՝ բացառիկ դեպք է, երբ իշխող կուսակցության առաջնորդը լավ աշխատանքի համար պարգևատրում է ընդդիմության ներկայացուցչին» (խմբ. կողմից. «Օրինաց երկիրն» այն ժամանակ ընդդիմության մեջ էր):

Ծրագրերի մասին իմ ավանդական հարցին պատասխանում է, թե սոցիալական խնդիրներից զատ, որոնք միշտ էլ կան, կշարունակի առանձնակի ուշադրություն նվիրել կրթական ու մշակութային ծրագրերին. «Երեխաներին պետք է սովորեցնել ընկալել գեղեցիկը, այդ դեպքում շրջապատն էլ, կյանքն էլ ավելի գեղեցիկ կդառնան»:

**Զրուցեց**
**Հասմիկ Հարությունյանը**

**Նատալյա Լափաուրին Հայաստանի համայնքների ասոցիացիայի փոխտնօրենն է և Եվրախորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսում հայկական պատվիրակության քարտուղարը: Սեպտեմբերին անցկացված ավագանու ընտրություններում առաջադրումը նրա առաջին քաղաքական փորձն է: Քվեաթերթիկում նրա ազգանունը 13-րդն էր, սակայն հաջողությունը նրանից երես չթեքեց: Քվեարկության արդյունքներով Նատալյա Լափաուրին մայրաքաղաքի Նոր Նորք համայնքի նորընտիր ավագանու կազմում միակ կինն է:**

### Նատալյա Լափաուրի.

# «Երբ քայլն արված է, պետք է առանց վախենալու առաջ գնալ»

Բոլորը նրան Նատո են ասում: Ծնվել է Թբիլիսիում՝ վրացու և հայուհու ընտանիքում: Դպրոցն ավարտել է Վրաստանում, բարձրագույն կրթությունը ստացել Հայաստանում՝ սովորելով Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: Ամուսնացել է Երևանում: Երկու ամիս առաջ փոքրիկ է ունեցել: Խոստովանում է, որ երեխան կտրուկ փոխել է նրա աշխարհընկալումը. *«Սկսեցի նկատել այն, ինչին մինչ այդ երբեք ուշադրություն չէի դարձնում. այստեղ աղբ է թափված, կամ ճանապարհը սարքված չէ: Հիմա, երբ երեխայի հետ դուրս եմ գալիս, սկսել եմ շուրջս «մոր աչքերով» նայել. ինչպես պետք է նա է այս փողոցով անցնի, կամ ինչպես նրան այս մանկապարտեզ տանել»:*

Տեղական ինքնակառավարման ոլորտում նորեկ չէ, Հայաստանի համայնքների ասոցիացիայում 12 տարի զբաղվել է այս խնդիրներով: Համայնքային աշխատանքի կազմակերպման եվրոպական փորձին էլ միայն լսելով չէ, որ ծանոթ է: Իսկ ընտրական գործընթացին առաջին անգամ բախվեց: Սակայն ընտրարշավի կազմակերպման բանալին արագ գտավ: Որոշեց շեշտը դնել նրա վրա, որ ինքը կին է, նշանակում է՝ ավելի լավ կհասկանա սոցիալական ու կենցաղային խնդիրները: Բայց հիմա, հետ նայելով, համարում է, որ իր հաջողության բանաձևը մեկ այլ բանի մեջ էր. մարդիկ վստահեցին ոչ թե կնոջը, այլ նրա իրազեկությանը և գիտելիքներին:

*«Իմ ողջ ընտրարշավի ժամանակ առաջնորդվել եմ մեկ սկզբունքով. «Ամեն ինչի հիմքում ընտանիքն է»: Համայնքը նույնպես ընտանիքի մոդել է, որն առանց կնոջ մասնակցության չի կարող լիարժեք ու բարեկարգ լինել: Դա ոնց որ տուն լինի՝ առանց կնոջ ձեռքի: Ուստի ինձ համար համայնքում գլխավոր խնդիրներն են մաքրության ու հարմարավետության ստեղծումը, կանաչապատումը, որպեսզի բակ, փողոց դուրս գալը հաճելի լինի: Մարդիկ պետք է գիտակցեն. մեր տունը չի վերջանում մեր բնակարանի շեմով, համայնքը, բակը նույնպես մեր տունն են: Ջանացել եմ համոզել նրանց դրանում, զրուցել եմ, շրջել համայնքի մանկապարտեզներում, դպրոցներում, բակերում. անմիջապես բնակիչներից եմ տեղեկացել նրանց բողոքների, դժգոհությունների մասին, անգամ բակում նստած մեծահասակների հետ նարդի եմ խաղացել: Այլ կերպ հնարավոր չէ մարդկանց անկեղծության տրամադրես»:*

Իրականում նրա համար շատ դժվար էր: Մրցակիցներից շատերը ծնվել ու մեծացել են այս համայնքում: Շատերը հետո հանդիմանելով ասում էին, թե, իբր, եկավ զրոյից և հաղթեց, իսկ տարիներով այստեղ ապրող մարդիկ չանցան... Նա դրա գաղտնիքն ունի. *«Կատարել ես մի քայլ, մի՛ վախեցիր երկրորդ քայլն անելուց և գնա առաջ: Ու չպետք է սպասել խոչընդոտների. երբ չես սպասում, դրանք չեն էլ առաջանում»:*

Իմ այն հարցին, թե արդյո՞ք խոչընդոտ չի եղել, պատասխանում է՝ հիշելով, որ սկզբում ոնց էր հուսահատվել՝ իմանալով, որ իր նախընտրական պաստառները պոկում են, սակայն հետո գտնելով՝ գիտակցելով. նշանակում է՝ նրա մեջ տեսնում են մրցակցի:

Ինչի՞ մասին էր մտածում, երբ քվեարկում էր ինքն իր անվան դիմաց. «Այն մասին, որ իմ կյանքը կփոխվի, որ մարդիկ ինձ հետ են կապում իրենց ակնկալիքները, և դա մեծ պատասխանատվություն է: Կարծում եմ հենց դա էլ ինձ ուժ հաղորդեց»...

**Զրուցեց Կարինե Պետրոսյանը**

## Կարծիքների խաչմերուկ

# «Օրինակելի տանտիրուհուց մինչեւ թաղապետ մեկ քայլ է»,-

## համարում են Երեւանի բնակիչները եւ ընտրում տղամարդկանց

**Երևանում վերջերս անցկացված ՏԻՄ ընտրությունների արդյունքները մտորելու տեղիք են տալիս. կամ Երևանի կին թեկնածուներն անհաղորդ են հարազատ բակի կամ համայնքի հոգսերին ու ակնկալիքներին (ինչը բնավ էլ այդպես չէ), կամ էլ նրանք չափից ավելի խորաթափանց ու զգուշավոր են՝ գերադասելով չխառնվել նախօրոք հայտնի ելքով ընտրական մարտերին: Ինչպես պարզվեց մայրաքաղաքի ընտրողների հետ զրույցներից, գեղեցիկ սեռին՝ հետ է պահում համոզվածությունը, որ «տղամարդ մրցակիցների պատնեշը, միևնույն է, չես անցնի»:**

Ամենահետաքրքիրն այն է, որ կնոջը թաղապետի պաշտոնում ամենաշատը կցանկանային տեսնել տղամարդիկ: Նրանց խոսքերով՝ համայնքը նույն ընտանիքն է, և նրա բարեկեցության մասին հոգածությունը կնոջ ուղղակի դերն է: *«Այլ բան է, թե ինչ կին կկանգնի նրա «ղեկի» առաջ: Եթե անտարբեր ու անփույթ տանտիրուհին հոգ չի տանում իր ընտանիքի անդամների մասին, ապա ես իմ ձայնը նրան չեմ տա,-* հայտարարեց մանկավարժ Ներսես Մ.-ն: *- Քանի որ նման ճակատագիր է սպասում ապագայում նաև մեր համայնքին: Եթե խոսքն օրինակելի տանտիրուհու մասին է, ապա, ինչպես ասում են՝ նրան կանաչ ճանապարհ: Պատրաստ եմ քվեարկել երկու ձեռքով: Սակայն նախքան ընտրության գնալը, անպայման նրա մասին տեղեկություններ կհավաքեմ, թե ինչպիսին է նա ընտանիքում»:*

Կին ընտրողները որոշակի կասկածներ ունեն: Ոչ թե այն իմաստով, թե գեղեցիկ սեռի ձեռքերում համայնքը կծաղկի այս բառի ուղղակի և անուղղակի իմաստով: Դրանում նրանք առավել քան վստահ են: *«Միակ բանը, որ անհանգստացնում է, այն է, թե արդյոք կբավարարե՞ն նրա ուժերը,-* իր մտավախությունն է հայտնում տնային տնտեսուհի Արմիդա Բաղալյանը: *- Ես դատում եմ ինձանով. նույնիսկ գործազուրկ լինելով՝ երբեմն տնային հոգսերից շունչ չեմ կարողանում քաշել: Իսկ եթե համայնքի հոգսերն էլ թափվեն, ուրեմն ընդհանրապես կկորչես: Կարծում եմ, որ ամուսինն էլ հիացած չի մնա, ու երեխաներն էլ առանց ճաշի կմնան...»:*

*«Ի՞նչ անհեթեթություն,-* հակադարձում է ուժային կառույցներից մեկի ներկայացուցիչը, ով չցանկացավ ներկայանալ: *- Բա լվացքի մեքենան ինչի՞ համար է, բա խոհանոցի կոմբա՞յնը, փոշեկո՞ւլը: Աստծո սիրուն, թող այնպես հաշվարկի իր աշխատանքային օրը, որ տեղավորվի 8 ժամի մեջ. պետք չէ աշխատանքի վայրում անիմաստ նստել, ինչպես անում են հիմա այդ պաշտոններում տղամարդիկ: Ջանձրացրել է նրանց դատարկախոսությունը, համայնքի նկատմամբ անտարբերությունը: Դուք նայեք այս աղբակույտերին, մանկապարտեզների վիճակին, աղբամանները տակնուվրա անող բոմժերին, թափառող շներին: Իսկ եթե համայնքապետը կին լիներ, վստահ եմ, վաղուց ամեն ինչ կկարգավորվեր: Ես, ընդհանրապես, իշխանության մեջ մայրիշխանության կողմնակից եմ. կանայք և ավելի բարեխիղճ են, և ձեռքից ավելի մաքուր»:*

Պոտենցիալ կին թեկնածուների անկաշառությանը չեն կասկածում նաև մյուս հարցվածները: Այլ հարց է, որ այդ դատողությունները զուտ տեսական բնույթի են, քանի որ մեր բոլոր զրուցակիցները գրեթե վստահ են, որ կանանց, միևնույն է, թույլ չեն տա բարձր պաշտոններ զբաղեցնել: Մեկից մեկ «կուլ կտան», մեխանիզմը հայտնի է. ընտրություններից շատ առաջ ամեն ինչ այնպես կդասավորեն, որ նա ինքնաբացարկ կտա: Թոշակառու Մեսրոպ Մայիլյանը ենթադրում է. *«Գործող համայնքապետները թույլ չեն տալիս կերակրատաշտին մոտենալ նույնիսկ «կողմնակի» տղամարդկանց, էլ ուր մնաց թե կանանց: Գուցե ավագանու կազմում ընտրվելու հնարավորություն կա, իսկ թաղապետ՝ հազիվ թե: Նույնիսկ եթե ընտրվի էլ, կինը երկար չի դիմանա: Մի հարյուր օր... Մեր տղամարդիկ չեն սիրում, որ իրենց ղեկավարում են տիկնայք: Մենք՝ հայերս, այսպես ենք ստեղծված...»:*

Տարօրինակ է, բայց մայրաքաղաքում մտածելակերպային խոչընդոտները կարծես թե ավելի են արտահայտված, քան գյուղական համայնքներում: Այլ կերպ չես բացատրի, թե ինչու մեզանում կին գյուղապետները մոտ երկու տասնյակի են հասնում, իսկ մայրաքաղաքի ավագանիների կազմում կանանց թիվն 8-ից բարձր չի անցնում: Իսկ թաղապետ ընդհանրապես չի եղել: Երևի թե, մայրաքաղաքի կանայք որոշել են համբերությամբ զինվել և սպասել, թե երբ կփոխվի երկուսից մեկը. կամ մտածելակերպը, կամ «խաղի կանոնները»: Իսկ ավելի լավ է՝ թե՛ մեկ և թե՛ մյուսը: *«Դրա համար ժամանակ է պետք,-* համարում է ինժեներ Պետրոս Մ-ն: *- Մի տասը տարի, իսկ գուցե՝ ավելի շատ: Իսկ իշխանության ստորին էշելոններում կանայք մեզ արդեն հիմա են պետք: Հատկապես ավագանու կազմում, որտեղ սրությամբ զգացվում է կնոջ մտածողության պակասը, որտեղ պահանջվում է կնոջը բնորոշ հետևողական, կշռադատված, նույնիսկ ստեղծագործական մոտեցում: Այ եթե հայուհիներն սկսեն ավելի մեծ ակտիվություն դրսևորել իշխանության այս առաջին օղակում, գուցե՝ հասարակության մեջ փոփոխություններն ավելի շուտ սկսվեն»...*

**Ասյա Ծատուրովա**

Փորձագետի անկյուն

# Խորհրդարանին անհրաժեշտ է կանանց «կրիտիկական զանգված»

**Շուտով Ազգային ժողովը հերթական անգամ կզբաղվի Ընտրական օրենսգրքի բարեփոխումներով: Նպատակը՝ այն ավելի մոտեցնել ժողովրդավարական չափորոշիչներին: Ու թեև կյանքը ցույց է տալիս, որ ընտրական օրենսդրությունը նշյալ չափորոշիչներին ավելի արագ ու հեշտ է մոտենում, քան բուն ընտրությունները, պատգամավորները լի են Ընտրական օրենսգիրքը կատարելության հասցնելու վճռականությամբ:**

**Հանրապետության կանանց կազմակերպությունները որոշել են այս առնչությամբ հիշեցնել ժողովրդի ընտրյալներին, որ ժողովրդավարությունն ամեն ինչից զատ ենթադրում է տղամարդկանց ու կանանց հավասար ներկայացվածություն օրենսդիր մարմնում: Ահա թե ինչու դեռ երկու ամիս առաջ երկու տասնյակից ավելի կանանց կազմակերպություններ ԱԺ պետահրավական հարցերով մշտական հանձնաժողով դիմում ներկայացրին Ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: Հիշեցնենք, որ այս հոդվածի երկրորդ կետը պարտավորեցնում էր քաղաքական կուսակցություններին իրենց ընտրացուցակներում ընդգրկել 15%-ից ոչ պակաս կանանց, ընդ որում՝ յուրաքանչյուր տասնյակում: Դատելով նախորդ ընտրությունների արդյունքներից՝ այս միջոցն անբավարար էր, պատգամավորական կորպուսի կազմում կանանց ներկայացվածությունը հաջողվեց բարձրացնել միայն մինչև 9,2%-ի (այսօր՝ 8,3%):**

**Այսօր կանանց կազմակերպություններն առաջարկում են պատգամավորներին քննարկել վերոհիշյալ հոդվածի մեկ այլ ձևակերպում.**

*«Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացված ընտրական ցուցակում քաղաքական կուսակցությունը պարտավոր է հաշվի առնել մի սեռի 70%-ից ոչ ավելի ներկայացուցչությունը, ընդ որում՝ քաղաքական կուսակցությունների առաջադրած կին և տղամարդ թեկնածուների հաջորդականության տարբերությունը չպետք է գերազանցի երեք տեղը:*

*Ցուցակից կնոջ թեկնածությունը հանելու կամ պատգամավորական մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա տեղը պետք է զբաղեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը»:*

**Նոր ձևակերպման առնչությամբ մեկնաբանություններ ստանալու նպատակով մենք դիմեցինք այս առաջարկի նախաձեռնող Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Զեմմա Հասրաթյանին:**

**- Չի կարելի չնկատել, որ կանանց կազմակերպությունների կողմից առաջարկվող ձևակերպումը, այն է՝ «նույն սեռի 70%-ից ոչ ավելի ներկայացուցչությունը», շատ ավելի կոռեկտ է, քան եթե խոսվեր կանանց համար 30% քվոտայի մասին: Այնուամենայնիվ, ինչո՞ւ այդպիսի համամասնություն:**

- Մեր առաջարկած 30%-ը միջազգային փորձագետների կողմից վաղուց սահմանված թիվ է՝ «կրիտիկական զանգված», որ կարող է փոխել իրավիճակը և իրական ազդեցություն ունենալ ընդունվող որոշումների կոնտեքստի վրա: ԱԺ-ում, որտեղ հարցը լուծվում է ձայների երկու երրորդով, հենց 30% կանայք կարող են խոչընդոտել այն օրենսդրական ակտերի ընդունումը, որոնք ուղղված չեն մարդուն կամ երկրի զարգացման տեսանկյունից դրական փոփոխությունների չեն բերի: Սակայն քվոտայի բարձրացումը մինչև 30% բավարար չէ: Նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ տոկոսները կարող են հայտնվել ցուցակների վերջում, ուստի մենք առաջարկում ենք, որ յուրաքանչյուր երրորդ տեղում լինի մյուս սեռի ներկայացուցիչ: Մեր ձևակերպման մեջ մեկ այլ կարևոր հանգամանք էլ է արտացոլված: Վերջին ընտրությունների փորձով մենք համոզվեցինք, որ թեև ԱԺ անցած կուսակցությունները կատարել էին 15%-անոց քվոտայի մասին պահանջը և ցուցակի յուրաքանչյուր տասնյակում ներկայացրել էին մեկական կին, սակայն այդ կանանցից շատերը խորհրդարան այդպես էլ չմտան՝ հրաժարվելով մանդատ ստանալուց հասարակության համար անհասկանալի պատճառներով... Այս բացասական միտումը հաղթահարելու համար անհրաժեշտ ենք համարել նշել, որ ցուցակից կին թեկնածուի դուրս գալու դեպքում նրա փոխարեն անցնի ցուցակում ներկայացված հաջորդ կինը:

**- Գաղտնիք չէ, որ քվոտաներ մտցնելու հարցը ուժեղ սեռի շատ ներկայացուցիչներ ընկալում են որպես ոտնձգություն և մեկնաբանում իբրև իշխանություն կորզելու կանանց ձգտում: Ինչո՞ւ են այնուամենայնիվ Հայաստանում այդքան անհրաժեշտ քվոտաները:**

- Իշխանության մեջ կանանց մասնակցությունը ոչ թե ինքնանպատակ է, այլ օրվա պահանջ, երկրի ճիշտ կայուն, տնտեսական և սոցիալական զարգացման նախապայմանն է: Մինչդեռ Ազգային ժողովում երկրի բնակչության կին կեսը (52%) ներկայացված է ընդամենը 8% կին պատգամավորով: Դրանով իսկ խախտվում է ոչ միայն սոցիալական արդարության սկզբունքը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այն խորհրդարաններում, որտեղ չկա կանանց ու տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածություն, և հատկապես այնտեղ, որտեղ կանայք 10%-ից պակաս են, տուժում է ընդունվող օրենքների սոցիալական ուղղվածությունը: Էլ չեմ խոսում այն մասին, որ գործադիր իշխանությունում կանայք ավելի քիչ են: Այստեղից էլ հատուկ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որոնք կոչված են կանանց հնարավորություն տալու ներկայացված լինել իշխանության և կառավարման կառույցներում:

Կա նաև Հայաստանի կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերի գծով պետության ստանձնած պարտավորությունների գործոնը: Հայտնի է, որ Եվրախորհրդի երկրների նախարարների կոմիտեն դեռ 2003 թ. սահմանել է այսպես կոչված «հավասարության շեմը»՝ իշխանության կառույցներում երկու սեռերի օպտիմալ՝ «40-ը 60-ի» համամասնությամբ ներկայացվածության մասին: Նշեմ, որ 2006 թ. Ստրասբուրգում Եվրախորհրդի երկրների նախարարների 6-րդ կոնֆերանսում այս շեմը մինչև 2020 թ. ապահովել պարտավորեցնող բանաձևին կողմ է քվեարկել նաև մեր աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Աղվան Վարդանյանը: Այսօր 2008 թվականն է, և ճիշտ ժամանակն է այս նշածողի ապահովմանն աստիճանաբար անցնելու: Գործադիր իշխանությունում սա հնարավոր է քաղաքական պաշտոններում կանանց թվի աստիճանական ավելացման օգնությամբ, իսկ օրենսդիր իշխանությունում՝ միայն քվոտաների միջոցով:

**- Հասկանալի է, որ կանանց համար ընտրական քվոտաների բարձրացման մասին որոշումը կախված է խորհրդարանում ներկայացված քաղաքական կուսակցություններից: Պատրա՞ստ են նրանք դրան:**

- Մեր կուսակցությունները, որոնք կոչված են լինելու ժողովրդավարական կառույցներ, իրականում այդպիսին չեն: Ամենամեծ խմբակցությունը մեր խորհրդարանում ունի Հանրապետական կուսակցությունը. այն 64 մանդատ ունի, որոնք բաշխված են 63 տղամարդ և 1 կին համամասնությամբ: Այս առումով «Բարգավաճ Հայաստան», Հայ հեղափոխական դաշնակցություն և «Ժառանգություն» կուսակցություններն ավելի ժողովրդավար են երևում. նրանցից յուրաքանչյուրի խմբակցությունում երեքական կին են: Այսպիսով, հույս ունենալ, թե բոլոր կուսակցությունները պատրաստ են իրավահավասար հիմունքներով առաջադրել և հաշվի առնել կանանց կարծիքը, մենք առայժմ չենք կարող, և ստիպված ենք խոսել քվոտաների մասին: Ի դեպ, բոլոր պետությունները, նույնիսկ նրանք, որոնցում այսօր ձեռք է բերվել իշխանությունում սեռերի հավասարակշռված՝ «50-ը 50-ի» ներկայացվածություն, դրան են հասել քվոտաներ ընդունելու միջոցով՝ չսպասելով, մինչև հասարակական կարծիքը պատրաստ կլինի հավասարաչափ քվեարկել տղամարդկանց ու կանանց օգտին: Շատ երկրներում այսօր էլ կուսակցությունների ֆինանսավորումը կատարվում է՝ հաշվի առնելով գենդերային գործոնը: Այնպես որ կուսակցությունները պետք է վերանայեն իրենց դիրքորոշումը կանանց մասնակցության խնդրի նկատմամբ: Արդեն պարզ է, որ 15% քվոտան ցանկալի արդյունք չի տվել, նշանակում է՝ այն պետք է բարձրացնել:

**- Ձեր առաջարկին ԱԺ-ից արձագանք ստացե՞լ եք:**

- Առայժմ մեր դիմումը օդում կախված է, օրենսդիր իշխանության ներկայացուցիչներից ոչ մեկը մեզ չի պատասխանել, թեև 23 կանանց կազմակերպությունների ստորագրությամբ նամակն ուղարկվել է բոլորին՝ խմբակցությունների, հանձնաժողովների ղեկավարներին, խոսնակին և նրա տեղակալներին: Սակայն մենք հույսներս չենք կորցնում:

Առավել ևս, որ որոշակի տեղաշարժ կարծես թե կա: Այսպես, վերջին 17 տարվա ընթացքում առաջին անգամ Հայաստանի կառավարությունը իր 2008-2012 թթ. ծրագրում սոցիալական քաղաքականության առաջնայնություններից մեկն է համարել տղամարդկանց ու կանանց իրավունքների ու հնարավորությունների հավասարության ապահովումը: Դա ազդակ է նաև խորհրդարանի համար. ինչպե՞ս կյանքի կկոչվի այս ծրագիրը, եթե չկան դրա լուծմանն ուղղված հստակ միջոցառումներ, եթե չկա երկու սեռերի համար հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ երաշխավորող օրենք: Ի դեպ, այդ օրենքի նոր նախագիծն արդեն պատրաստ է: Այն մշակել է Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի պատվերով մեր փորձագիտական խումբը, և բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ կառավարությունն այս օրինագծին կաջակցի: Մնում է խորհրդարանին համոզել այն ընդունելու անհրաժեշտության մեջ: Մինչ այդ, սակայն, պետք է համոզենք պատգամավորներին քվոտաները բարձրացնել:

**Զրուցեց Նորա Կանանովան**

***Հ.Գ. «Կինը և քաղաքականությունը» հավելվածի խմբագրակազմը սրտանց շնորհավորում է Զեմմա Հասրաթյանին՝ ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության համար կառավարական պարգևի՝ ՀՀ վարչապետի հուշամեդալին արժանանալու կապակցությամբ:***

Քաղաքական խոհանոց

# Ի՞նչ են մտածում պատգամավորները քվոտաների մասին

**Հայոց խորհրդարանը մեկ անգամ չէ, որ դրսևորել է իր ոչ այնքան բարեհաճ վերաբերմունքը կանանց համար քվոտաների նկատմամբ: Հանուն արդարության հարկ է նշել, որ անբարյացակամության աստիճանը տարիների հետ նվազում է, թեպետ քվոտավորման անհաշտ ընդդիմադիրները միշտ պատրաստ են հակափաստարկներից տպավորիչ բարիկադ կառուցել: Ընտրական օրենսգրքում կանանց քվոտա մտցնելու առաջին փորձը կարելի է առանց անհարմար զգալու «ողորմություն» կոչել: Կանանց հատկացված 5%-ը կուսակցական ցուցակներում այլ կերպ չես անվանի, հատկապես եթե հաշվի առնվի, որ կանայք բնակչության 52%-ն են: 2006-ին Ընտրական օրենսգրքի այս կետը սրբագրեցին՝ ամրագրելով կուսակցական ցուցակներում կանանց 15% ներկայացվածության մասին դրույթը: Դա քաղաքական պայմանավորվածությունների արդյունք էր, ընդ որում, սակարկություններն սկսվեցին 25%-ի մասին խորհրդարան ներկայացված առաջարկությունից: Այսօր, երբ ԱԺ օրակարգում Ընտրական օրենսգրքի հերթական բարեփոխումն է, կանանց հասարակական հատվածը նորից առաջարկում է վերանայել քվոտան՝ բարձրացնելով այն մինչև 30%: Մենք փորձեցինք պարզել, թե ինչ են մտածում այս առնչությամբ պատգամավորները: Բացարձակ կողմնակիցները թեև փոքրաթիվ էին, բայց քվոտայի չափի մասին փաստեցին՝ որքան շատ, այնքան լավ, արագ ի հայտ եկան: Սակայն խոսքը նրանց մասին չէ:**

*Սամվել Նիկոյան (ՀՀԿ).*

**«Ես կողմ եմ բնական, այլ ոչ թե արհեստական ճանապարհին»**

Ես դեմ եմ ցանկացած խտրականության, եթե անգամ դա դրական նպատակով է արվում: Եթե որոշակի տոկոս սահմանելով՝ խորհրդարան են բերում կանանց, ովքեր համապատասխան քաղաքական ուղի չեն անցել, դրանով մենք որևէ խնդիր չենք լուծի, և նրանք ևս լավ վիճակում չեն լինի: Ես ուզում եմ, որ կանանց մասնակցությունը քաղաքական կյանքին բարձր լինի, բայց ոչ թե արհեստական, այլ բնական ճանապարհով: Եթե քվոտավորման առաջարկ այնուամենայնիվ ընդունվի, ՀՀԿ-ն, իհարկե, համապատասխան ներուժ ունի այդ քվոտան ապահովելու համար:

*Հովհաննես Մարգարյան*
*(«Օրինաց երկիր»).*

**«Այսօր ես կտրուկ փոփոխությունների կողմնակից չեմ»**

ՕԵԿ-ը հնարավորություն ունի ավելացնել խորհրդարանում իր կանանց թիվը: Երբ քվոտավորման 5 տոկոսը դարձրինք 15, դա շրջադարձային եղավ մեր խորհրդարանի համար, բայց այսօր ես կողմնակից եմ ոչ թե կտրուկ փոփոխությունների, այլ՝ աստիճանական զարգացման: Այսօր կանայք մեր խորհրդարանում ակտիվ են աշխատում, բայց բարեփոխումները չպետք է արհեստական լինեն:

*Նաիրա Զոհրաբյան*
*(«Բարգավաճ Հայաստան»).*

**«Օրենսդիր գործունեությամբ պետք է զբաղվի նա, ով ունակ է, անկախ սեռից»**

Իհարկե, որքան խորհրդարանում շատ լինեն կանայք, այնքան մթնոլորտն ավելի բարի, կառուցողական կլինի, բայց ես դեմ եմ արհեստական բաժանումներին: Օրենսդիր գործունեությամբ պետք է զբաղվի նա, ով ունակ է, անկախ սեռից: Կարծում եմ՝ գործող համամասնությունը պահպանելը ճիշտ է: Եթե կա առաջարկ, կարելի է ավելացնել, բայց չեմ կարծում, թե դա երաշխիք է, որ ավելի ակտիվ կանայք կլինեն խորհրդարանում, կամ խորհրդարանի որակը դրանից կարող է փոխվել: Որևէ համամասնություն երաշխիք չէ, եթե չկա պրոֆեսիոնալիզմ: Վերջերս բազմաթիվ կուսակցություններում տանող ուժը կանայք են, մեր կուսակցությունում ևս շատ ակտիվ կանայք կան, այնպես որ՝ եթե առաջարկն ընդունվի, ԲՀԿ անդամ շատ ակտիվ կանայք կարող են աշխատել խորհրդարանում:

*Ստեփան Սաֆարյան*
*(«Ժառանգություն»).*

**«Մենք պատրաստ ենք օրինակ ծառայել»**

«Ժառանգություն» խմբակցությունում կանայք 42 տոկոս են կազմում, և մենք կարողացանք հասարակությանն ի ցույց դնել, որ կանայք ոչ պակաս չափով կարող են քաղաքական գործիչ, խորհրդարանական լինել, քան տղամարդիկ, որոշ առումներով նրանք անգամ գերազանցում են մեզ: Իհարկե, խոսքը մեխանիկական ավելացման մասին չէ: Խորհրդարան պետք է գա այն կինը, ով իսկապես ասելիք և անելիք ունի քաղաքական դաշտում: Հասկանալով, որ այսօր խաղի կանոնները Հայաստանում ուժային են, կանայք շատ դեպքերում իրենց հեռու են պահում և չեն համարձակվում մասնակցել ընտրություններին, այդ պատճառով նրանց համար քվոտաներ ապահովելն անհրաժեշտ է: Մեր խմբակցությունը պետք է օրինակ հանդիսանա մյուս խմբակցությունների համար:

*Ալվարդ Պետրոսյան (ՀՅԴ).*

**«Մենք ինքներս ենք մեղավոր մեր պարտությունների համար»**

Ես դրական եմ վերաբերվում կանանց թվի մեծացմանը խորհրդարանում, թեև տոկոսային բաժանման մեջ վիրավորական տարրեր կան, որովհետև կարծում եմ՝ մարդու կերպարը և գործունեությունն են որոշում նրա՝ խորհրդարանում լինել-չլինելու հարցը: Բայց եթե այսօր շատ պրագմատիկ ենք դարձել և ուզում ենք խոսել թվերով, ապա հիշենք, որ մեր բնակչության կեսից ավելին կանայք են, բարձրագույն կրթություն ստացած և ընդհանրապես՝ բանականության գործակցով ոչնչով չզիջող: Եվ այդ դեպքում ինչո՞ւ պետք է նրանք 30 տոկոս կազմեն խորհրդարանում, ներդաշնակ հասարակության մեջ նման անհներդաշնակ բաժանումներ չեն լինում: Երբ երկիրը ծանր վիճակում է, բեռնակիրը կանայք են, բայց երբ ավելի բարեկիրթ ոլորտում ենք հայտնվում, և նրանց շատ փոքրիկ նշաձող են տալիս, դա վիրավորական է: Կարծում եմ՝ լավ կլինի, որ հայ կանայք համառեն, բայց մեր պարտությունների մեջ մեծ մասամբ մենք ենք մեղավոր:

**Զրուցեց Արմինե Գասպարյանը**

**Խմբագրության կողմից. Ձեռնպահ մնալով պատգամավորների կարծիքների մեկնաբանություններից՝ փորձենք որոշ ճշտումներ կատարել: Քվոտաները չեն ենթադրում անարժան թեկնածուների առաջադրում և չեն բացառում նրանց որակավորմանն ու փորձին ներկայացվող պահանջները: Ու եթե կուսակցությունները պնդում են, թե իրենց մոտ բավարար թվով պատրաստված կանայք կան, ապա իմաստ չունի վախենալ, որ խորհրդարան կանցնեն անարժանները:**

ԻՆՔՆԱՊԻՄԱՆԿԱՐ

# Կանայք, որոնց վստահում են...

**Նրանք ընդամենը 20-ն են, ովքեր այսօր գլխավորում են հանրապետության գյուղական համայնքները: Մենք ընտրեցինք նրանց մասին պատմություններից ընդամենը երկուսը, որոնք կարելի է տիպիկ համարել, թեև այս կանանցից յուրաքանչյուրն իր ճակատագիրը, իր կյանքն ունի: Պարզապես մի գեղեցիկ օր նրանք իրենց մեջ ուժ են զգացել օգնելու համագյուղացիներին, վերջիններս էլ նրանց վստահել են և չեն զղջացել: Ահա թե ինչու ընտրում են մի քանի անգամ անընդմեջ...**

**«Չգիտեմ, թե նրանց ինչը ավելի շատ ձեռք չէր տալիս՝ իմ սկզբունքայնությո՞ւնը, թե՞ սեռը»**

...Հիմա կասեք՝ գլուխ է գովում: Ես շատ աշխատասեր եմ, բացի աշխատանքիցս, աշխատում եմ տանը՝ հողագործություն, անասնապահություն: Երբ 1993-ին առաջին անգամ դարձա գյուղխորհրդի նախագահ, վիճակը շատ վատ էր. լույս չկար, գազ չկար, գյուղխորհրդի պատգամավորներն իրենք խնդրեցին, որ ես դնեմ իմ թեկնածությունը, իբր՝ դու հաստատ կհաղթահարես: Խոսեցի ընտանիքիս հետ, ամուսինս սկզբում համաձայն չէր: Ասում էր՝ ծանր է, փոքր երեխաներ ունենք, հետո նա ինձ շատ էր օգնում, ինքն էր ինձ տանում-բերում, հարցերը միասին էինք լուծում: Հիմա էլ շատ հարցեր տղայիս հետ եմ լուծում, փեսայիս հետ, աղջիկս է օգնում, և իմ բոլոր նախկին աշակերտների վրա եմ հենվում: Ում էլ որ դիմում եմ, բոլորն էլ օգնում են:

93-ին ես ընտրություններում մենակ առաջադրվեցի, ու դրանից հետո էլ երկու անգամ միակ թեկնածուն էի. իսկ հետո արդեն հայտնվեցին մրցակիցներ: Իհարկե, կային մարդիկ, ովքեր կնոջը գյուղապետի դերում չէին ընդունում: Ես չգիտեմ՝ ինչը նրանց ձեռ չէր տալիս. այն, որ ես կի՞ն եմ, թե՞ այն, որ ես չափից ավելի սկզբունքային եմ: Նախկին գյուղխորհրդի նախագահը, որը, ի դեպ, իմ մանկության ընկերն էր, սեփականաշնորհման ժամանակ նրանց էր բաժանել հողերի, մեխանիզացիայի առյուծի բաժինը, մյուս գյուղացիներին փաստորեն ոչինչ չէր հասել: Ու նրանք, ովքեր այն ժամանակ շահել էին, իհարկե, գիտեին, որ ինձ հետ այդ գործարքները չեն անցնի, ու իմ դեմ քվեարկեցին: Մինչև այսօր էլ իմ դեմ են քվեարկում, սակայն մեծ մասը, միևնույն է, ինձ է ընտրում: Թեկուզ մի քանի անգամ փորձեցին ինձ վախեցնել, սպառնալ: Բայց ես վախկոտ չեմ, գուցե սա գեներով է եկել: Իմ նախնիները Սասունից են, բայց ես ծնվել ու մեծացել եմ այս գյուղում, այստեղ դպրոցում երկար ժամանակ դասավանդել եմ, բոլորին ճանաչում եմ, գիտեմ, թե մարդիկ ինձնից ինչ են սպասում, և ինչպես գտնել յուրաքանչյուրի մոտեցման ձևը:

**«Որոշեցի դառնալ այն կանանցից մեկը, որը համարձակություն կունենա»...**

Ես իմ թեկնածությունն առաջադրեցի տեղական ինքնակառավարման մասին օրենքն ընդունելուց հետո առաջին ընտրություններին: Մարզում մեր համայնքը շարունակ քննադատվում էր, քարկոծվում, այն ժամանակ խոսքը սեփականաշնորհման մասին էր, ու ես մտածում էի. ունենալով այսքան լավ գյուղ, ո՞նց կարելի է անընդհատ քննադատվել: Նախքան առաջադրվելս շատ վախենում էի. մեզանում կին համայնքի ղեկավարը սարսափելի բան էր: Հարազատներիս հետ չխորհրդակցեցի, ո՛չ ծնողներիս, ո՛չ եղբայրներիս: Ինքնուրույն եմ որոշել, մտածեցի փորձեմ, ես էլ լինեմ այն կանանցից մեկը, որը համարձակություն կունենա, որ աշխատի օրենքով: Եթե անկեղծ լինենք, ապա համայնքն առաջին անգամ ինձ ընտրեց ոչ ինձ համար, այլ ծնողներիս խաթր. նրանք շատ մեծ վաստակ ունեն այդ գյուղում: Մայրս երկար տարիներ մանկաբարձուհի է եղել, գյուղի ամբուլատորիայի միակ բուժաշխատողը: Ինձ հետ կային երեք այլ թեկնածուներ՝ գյուղխորհրդի նախագահը, նրա տեղակալը և քարտուղարը: Ես մարզի վարչակազմում 12 տարվա աշխատանքային ստաժ ունեի, գյուղում չէի աշխատել և համարվում էի «օտար» մարդ: Բայց չնայած դրան երկրորդ փուլ անցանք ես ու գյուղխորհրդի քարտուղարը: Իսկ հետո ես նրանից էլ առաջ անցա ձայների մեծամասնությամբ: Որ ասեմ, թե մեծ բարեկամություն ունենք, սուտ կլինի: Աջակցում էին ընկերներս, դասարանցիներս: Իսկ ծնողներս սկզբում պարզապես զարմանում էին՝ ասելով. «Էս քանդված գյուղում ինչ կա, գալու ես, հեղինակազրկվես»: Սակայն ինձ մոտ ամեն ինչ ստացվեց, երևի դա այդպես պիտի լիներ:

**Արմինե Մխիթարյան**

Ըստ «ՏԻՄ-երի գենդերային ինդիկատորները» հետազոտության նյութերի

ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՆԸ

# Կկարողանա՞ Փեյլինը կին դեմոկրատների ձայները բերել

**Սառա Փեյլինը, որին նախագահի թեկնածու Մակքեյնը ընտրել է իրեն զուգընկեր, նախկինում գրեթե անհայտ էր հարազատ Ալյասկայի սահմաններից դուրս: Նա մեկուկես տարուց փոքր-ինչ ավելի է, որ նահանգապետ է, իսկ մինչ այդ ղեկավար աշխատանքի փորձը սահմանափակվում էր Վասիլլա փոքր ավանում քաղաքապետի պաշտոնով:**



Ուստի գլխավոր դրդապատճառներից մեկը, որով, ըստ քաղաքագետների, առաջնորդվել է Մակքեյնը, իր կողմն այսպես կոչված «քլինթոնյան դեմոկրատներին» հրապուրելու ձգտումն է, այսինքն՝ նախևառաջ կանանց, ովքեր նախընտրական նախագահական մրցարշավում աջակցում էին ԱՄՆ նախկին առաջին տիկին Հիլլարի Քլինթոնին: Կին դեմոկրատները ի պատասխան հակադարձում են, որ իրենք չափից ավելի են հարգում իրենց, որպեսզի նախագահական ընտրություններում կողմնորոշվեն «սեռային հատկանիշով»:

**«Ֆեմինիստական երազանք» կամ «ֆեմինիստական մղձավանջ»**

**Որպես փոխնախագահի թեկնածու՝ Սառա Փեյլինի առաջադրումով՝ ամերիկացի ֆեմինիստուհիները կանգնեցին դժվարին ընտրության առջև:**

Ինչ էլ որ լինի նախագահական մրցարշավի ելքը, 2008 թվականը մենք կհիշենք որպես Կանանց տարի, գրում է ամերիկյան «The Boston Globe»-ը: Նախ՝ Հիլլարի Քլինթոնը ընդհուպ մոտեցավ այն գծին, որ առաջադրվեր որպես դեմոկրատական կուսակցությունից նախագահի թեկնածու: Այս ֆեմինիստական երազանքին վիճակված չէր իրականանալ: Այժմ հայտնվել է Սառա Փեյլինը, որին հանրապետականներն ընտրել են փոխնախագահի թեկնածու: Եվ եթե Հիլլարին ֆեմինիստական երազանք էր, ապա Փեյլինին ոմանք համարում են ֆեմինիստական մղձավանջ. պահպանողական կին քաղաքական գործիչ, որ հասարակական հարցերում հարում է աջ հայացքների, և ի թիվս այլոց, հանդես է գալիս արհեստական վիժումների դեմ: Կին գրող Ջեյն Սմայլին նրան կոչել է «մի կին, որն ուժեղացնում է հայրիշխանությունը, այլ ոչ թե վիճարկում այն»:

Սակայն նման մեղադրանքներն անհիմն են: Թեև Փեյլինը աբորտների դեմ է, նա «Ֆեմինիստուհիները հանուն կյանքի» կազմակերպության անդամ է: Այնպես որ ընտրություններում Փեյլինի՝ որպես թեկնածուի առաջադրումը Ամերիկայի կանանց համար կարևորագույն պահ է՝ ամփոփում է լրագիրը: Հատկապես հաճելի և ուրախալի է հետևել, թե ինչպես է «մայրական ուղիղ» վերածվում դեպի Սպիտակ տուն տանող ճանապարհի: Փեյլինը հինգ երեխաների մայր է և ամեն անգամ վերադարձել է ակտիվ աշխատանքի նրանց ծնվելուց հետո: Եվ ամուսինը նրան, կարծես թե, ամեն ինչում օգնում է:

**Առաջին տիկնանց համեմատություն**

**Ենթադրվում է, որ ԱՄՆ նախագահը պետք է լավ ընտանիք ունենա. բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ այս հատկությունը ամերիկացի ընտրողները համարում են խիստ կարևոր, քանի որ քիչ հավանական է, որ իր անձնական կյանքի խնդիրները լուծել չկարողացող մարդը ի զորու կլինի հաջողությամբ կառավարել երկիրը:**

Ամերիկացիներն ուշադրություն են դարձնում թեկնածուի ընտանեկան ստաժին, ընտանեկան հարաբերությունների որակին և երեխաների թվին: Բացի այդ, վերջին չորս տասնամյակների ընթացքում նախագահական ընտրություններից հետո անցկացված ամերիկացիների հարցումները ի հայտ են բերում զարմանալի օրինաչափություն. ընտրողների 5-7%-ը իրենց ընտրությունը կատարում է՝ հիմնվելով պոտենցիալ առաջին տիկնոջ նկատմամբ համակրանքի կամ հակակրանքի վրա:

**Օբաման կողմ է աշխատող կանանց համար հավասար վարձատրությանը**

**Այն ժամանակից ի վեր, ինչ Հիլլարի Քլինթոնն ավարտեց ընտրական քարոզարշավը, Օբաման հաճախ է խոսում այն մասին, թե նա ինչքան շատ բան է արել կանանց համար՝ կործանելով խոչընդոտները: Նա նշում է, որ Քլինթոնի քարոզարշավից շահել են բոլոր կանայք և օրինակ է բերում իր երկու դուստրերին:**

Իսկ վերջերս, ձգտելով ստանալ կին ընտրողների ձայները, նա հայտարարեց, որ ինքը կլինի աշխատող կանանց համար հավասար վարձատրության համար պայքարող լավագույն մարտիկը, քան իր մրցակից հանրապետական Ջոն Մակքեյնը: Թեկնածուն պատմել է, որ իրեն դաստիարակել են միայնակ մայրն ու տատը, որոնք ստիպված էին շատ բան զոհաբերել հանուն ընտանիքի ապահովության: Իսկ հետո նշել է, որ այս տարի Մակքեյնը դեմ էր այն օրինագծին, որն անհավասար վարձատրության դեպքում կհեշտացներ գործատուների դեմ կանանց հայցեր ներկայացնելը: Օբաման սատարել էր այս օրինագիծը: Պաշտպանվելով՝ Մակքեյնը հայտարարեց, որ սատարում է հավասար վարձատրության կանանց իրավունքը, սակայն այդ միջոցը կբերեր դատավարությունների թվի ավելացմանը:

**Վարկաբեկող նյութերի պատերազմ**

**Սառա Փեյլինի վրա հարձակումների առիթ է առավել հաճախ դառնում ոչ թե նրա քաղաքական կարիերան, այլ անձնական կյանքը:**

Սառան 44 տարեկան է, ամուսնացած, ունի հինգ երեխա: Սկզբում ակտիվորեն քննարկվում էր այն նորությունը, որ նրա 17-ամյա դուստրը հղիացել է իր համադասարանցի Լևի Ջոնսոնից և պատրաստվում է դեկտեմբերին երջանկացնել մորն առաջին թոռնիկով: Սառա Փեյլինն ինքն է պատմել ամերիկացիներին այս մասին հեռուստաեթերից այն բանից հետո, երբ ինտերնետում լուրեր հայտնվեցին, որ փետրվարին ծնված Սառա Փեյլինի որդու մայրը ոչ թե ինքն է, այլ նրա դուստր Բրիստոլը: Իրենց եզրակացությունը չարախոսողները հիմնում էին նրա վրա, որ նահանգապետի հղիության ընթացքում նրա ոչ մի լուսանկարում չի նկատվում փորը, և որ Բրիստոլը մոր հղիության վերջին հինգ ամիսներին դպրոց չի հաճախել: Ապա մամուլը անցավ Փեյլինի վրա նոր վարկաբեկող նյութերի: Օրինակ՝ Hollywood Newsroom-ում հրապարակված մի քանի լուսանկարներում Ալյասկայի նահանգապետը (կամ նրան շատ նման կի՞ն) կեցվածք է ընդունել անպարկեշտ կարճ փեշով հզոր մոտոցիկլի ֆոնին: Ամերիկացիների վերաբերմունքը լուսանկարների նկատմամբ ոչ միանշանակ էր: Ոմանք հայտարարեցին, որ այսպիսի գեղեցկուհի ունենալը փոխնախագահի պաշտոնում հրաշալի է. դա կբարձրացնի համաշխարհային ասպարեզում Միացյալ Նահանգների հեղինակությունը:

**Ըստ ամերիկյան մամուլի նյութերի**

Տեղական բարքեր

# Գյուղական համայնք. ո՞ւմ համար է ավելի հեշտ ղեկավարել

Այս հարցին պատասխանում են գյուղական համայնքների ղեկավարները և բնակիչները

«Եթե տղամարդ է, ամեն ինչ կարող է շատ հեշտ և արագ լուծվել: Օրինակ՝ մեր շատ համագյուղացիներ կան, լավ պաշտոններ ունեն Երևանում, կարամ ազատ մտնեմ, ասեմ՝ էս է հարցը, էն է հարցը: Բայց կանանց համար դժվար է սա: Բացի ձևական կողմից, կան նաև շատ ստվերային, խոհանոցային կողմեր այս գործում»:

«Միանշանակ՝ կնոջ համար ավելի դժվար է աշխատել, որովհետև կան շատ պահեր... Օրինակ՝ դեպք է պատահել, և պետք է գիշերվա 12-ին շտապ ինչ-որ տեղ գնալ: Կամ՝ համայնք մարդիկ են եկել, պետք ա գնաս, հետևները մի տեղ նստես, կնոջ մոտ դա մի քիչ լավ չի ստացվի, հո նա չի՞ գնա նրանց հետ տարբեր տեղեր ուտել-խմելու»...

«Հնարավոր չէ, որ այս պայմաններում տղամարդն արդար լինի. նրան բոլոր կողմերից խեղդում են, էնտեղից են կլպում: Կնոջը չեն կարա էդքան խեղդեն: Կինն ավելի հեշտ կարա արդար լինել, կարա կաշառք չվերցնի: Հետևները քեֆ չի անի, հարցեր կան...»

«Տղամարդ ղեկավարի համար կան ավելի բազում դժվարություններ: Տղամարդուն ճնշելու բազմաթիվ լծակներ կան: Տղամարդն ավելի հարմարվող է, ավելի ենթարկվող վերևներին»:

**Այս բոլոր պատասխանները մեկ անգամ ևս ապացուցում են այն փաստը, որ Հայաստանում քաղաքականությունը հաճախ կառուցվում է ոչ ֆորմալ ցանցերի, ծանոթությունների շրջանակի շնորհիվ, որոնք թույլ են տալիս հնարավորինս մատչելի դարձնել անհրաժեշտ ռեսուրսները, կոնտակտները, տեղեկատվությունը: Գաղտնիք չէ, որ դրանք զուտ տղամարդկային ցանցեր են, իսկ կանայք, եթե դրանց մուտք էլ ունեն, ապա միայն տղամարդկանց (եղբոր, հոր, ամուսնու, ծանոթի) միջնորդությամբ: Քաղաքական հարցերի քննարկումները անցկացվում են հիմնականում «տղամարդկային տարածքներում»՝ ռեստորան, խնջույք, բաղնիք ու սաունա, համապատասխան «տղամարդկային բառապաշարի» օգտագործմամբ:**

**Քաղաքականության մեջ և հատկապես ՏԻՄ-երում կնոջը հաջողության հասնելու համար հարկավոր է երեք նախապայմաններից առնվազն մեկի առկայությունը.**

**1. «Ծանոթ» տղամարդկանց, առաջին հերթին՝ ամուսնու աջակցությունը:**

**2. Տղամարդկանց գնահատականը, որ «ինքը նույնպես կարող է հարցեր լուծել»:**

**3. Կնոջը պետք է նկատեն, թույլ տան, առաջ տանեն: Իսկ դա անում են (կարող են անել) միայն տղամարդիկ: Կնոջը մնում է միայն ապացուցել, որ «ինքը դրան արժանի է»:**

**Հնարավո՞ր է ճեղքել այդ պատնեշը: Հարցն ամենևին էլ հռետորական չէ:**

**Լիլիթ Զաքարյան**

*Ըստ «Հայաստանում որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության պատճառները» հետազոտության նյութերի*

*Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ*

Ի դեպ

Վերևներում հարցերը մեծ մասամբ կուլիսների հետևում են լուծվում, ոչ պաշտոնական շփումների ժամանակ, շատ ավելի վաղ, քան մենք իմանում ենք հաղորդագրություններից: Կանայք այդ դաշտում բացառության հասնող փոքրամասնություն են և չեն կարողանում անհրաժեշտ կապեր ու փորձ ձեռք բերել: Այդ դաշտում նրանք պարտված են, եթե նույնիսկ իրենց պաշտոնեական պարտականություններն անթերի կատարեն: Դրանում համոզվել եմ բազմիցս: Երբ ինչ-որ հարցով հանդիպում էի մի որևէ բարձրաստիճան պաշտոնյայի հետ, տեսնում էի, որ այդ հարցը նրան արդեն ներկայացրել են, այն էլ՝ խեղաթյուրված, և անհնարին էր նրան համոզել, որ իմ տեղեկատվությունն ավելի ճիշտ է: Դա շատ լուրջ խնդիր է. կանանց դերը գործադիր կամ օրենսդիր իշխանության թևում նշանակալի կլինի այն ժամանակ, երբ նրանց թիվը որոշումների ընդունման մակարդակում անհամեմատ ավելի մեծ լինի»:

**Լարիսա Ալավերդյան**
**Աժ պատգամավոր**

**Հավելվածը հրատարակվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ**

**Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան:**
**Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի**

Տպաքանակը՝ 7000 օրինակ